

1. ՀԱՅԱՍՏԱՆԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հ. ՆԵՐՍԵՍ Վ. ԱԿԻՆՅԱՆ, ՆԵՐՍԵՍ
ԼԱՄՐԵՐՈՆԱԳԻ, ԱՐԲԵԼՅԱՆԿԱՆ ՏԱՐ-
ԱՌՆԻ, ՎԻԵՆՆԱ, 1956 թ.:

Վիեննայի Միթլարյան Ուստից Հ. Ներսես
Վ. Ակինյանը Ներսես Լամբրոնացու ծննդյան
ՏՕՕ-րդ տարեդարձի առթիվ լույս է բնծայել
«Ներսես Լամբրոնացի, Արբելյանկոյու Տար-
սոնի» բանասիրական աշխատությունը:

Հ. Ներսես Վ. Ակինյանի այս գործը, որի
կարևոր մասերը առաջին անգամ լույս են ա-
նել «Հանդես ամսօրյա» ուսումնաթերթի 1954
թվականի համարներում, բաղկացած է երեք
մասից՝ Ներսես Լամբրոնացու կյանքը, Գրական
վաստակները և Պաշտոնական, Հասանյանց,
Թոնիկյանց և Հեթումյանց (Լամբրոն և Պապի-
սոնի) ազգայնությունը:

Աշխատության առաջին մասում բանասերը
հետազոտում է Ներսես Լամբրոնացու ծնունդն
ու դաստիարակությունը, բանաստեղծությունն ու
կյանքը, ուսումնասիրում է ձգտումները:
Ներսես Լամբրոնացու կյանքի նկարագիրը
ամբողջական դարձնելու մտահոգությամբ հեղի-
նակն օգտագործել է Հ. Համազասպ Վ. Ոսկյա-
նի «Ակնարկ վանք» ուսումնասիրությունը և
Հ. Ն. Պողոսյանի խմբագրությամբ «Ակնարկ
ուրբ», որոնք նույնպես առաջին անգամ լույս
են տեսել «Հանդես ամսօրյա»-ի 1954—1955 թթ.
համարներում:

Հետաքրքրություն են ներկայացնում աշ-
խատության նաև երկրորդ և երրորդ մասերը:

Հ. Ներսես Վ. Ակինյանի այս աշխատություն-
նը Ներսես Լամբրոնացու կյանքն ու գործու-
նությունը ամբողջական ձևով ներկայացնելու
առաջին փորձն է:

ՄԱՆՈՒԿ Գ. ՃԻՋՄԵՋՅԱՆ, ԽԱՐ-
ԲԵՐԴ և իր գավալները, Ֆրեզնո, Կա-
լիֆորնիա, 1955 թ.:

Ամերիկահայ Մանուկ Գ. Ճիգմեջյանը լույս
է բնծայել չորս մասից բաղկացած մի աշ-
խատություն՝ «Խարբերք և իր գավալները»

վերնագրով: Իր գործը ամբողջական դարձնելու
նպատակով նա բնագրական քաղվածքներ է կա-
տարել բազմաթիվ խարբերակի գրողների,
պատմագիրների, բանասերների արդեն հրա-
տարակված գործերից և օգտագործել է հին ու
նոր աղբյուրի բան հարյուր հիսուն աղբյուր: Բազ-
մաթիվ լուսանկարներ և խարբերակի ու շրջա-
կալքը ներկայացնող բարեկարգ պատմա-բանա-
սիրական այս գործին տալիս են կենդանի
շունչ:

Առաջին բաժինը բնագրելով է խարբերակի և
խարբերակների պատմությունը 1850 թվակա-
նից մինչև 1890 թվականը: Հնագույն խարբեր-
ակի հետ կապված պատմական անցքերը ամ-
փոփ կերպով պատմելուց հետո, հեղինակը խո-
սում է խարբերակի և նրա շրջակալքի արդյու-
նաբերություն, խարբերակների անասնական և
կուլտուրական վերելքի մասին, այն մասին, թե
ինչպես ամերիկացի միսիոներները և լատին ու
կաթոլիկ նվիրակները ջանում էին իրենց ճանկը
դրել խարբերակի հալերին, նաև թուրք հետա-
դիմականների բռնադատումների, անարգել
շահատակությունների մասին, որոնցից զգված
հալերը մեկնում էին արտասահման:

«Խարբերակները Ամերիկայի մեջ և աշխարհում»
այս վերնագրի ունի աշխատության երկրորդ
մասը, որտեղ պատմվում է 1880-ական
թվականներից սկսած մինչև մեր օրերը արտա-
սահման զաղթած խարբերակների կյանքի,
հասարակական գործունեության, կուլտուրայի
և կենցաղի մասին:

Երրորդ բաժինը բնագրելով է խարբերակի և
խարբերակների պատմության 1890—1923
թվականները: Հեղինակը մանրամասն կերպով
պատմում է 1895 թվականի խարբերակի ջարդի
մասին, որ Հյուսիսեկ, Վերիլիսի, Վարի և Վերի
թաղերը վերածել էր անապատի: Պատմում է
ջարդերի հետևանքով տեղի ունեցած արտա-
գաղթի, որպեսզի երևանան և որբանոցների
մասին: 1908 թվականին հռչակված Օսմանյան
Սահմանադրությունը, ինչպես Արևմտյան Հա-
յաստանի, այնպես էլ խարբերակի հայերի կող-
մից ողջունվում է իրեն հայահալած քաղաքա-

Պանություն վախճան: Սակայն կարճատև էր տևախությունը: Թուրք ջարդարարները փորձում են քնաջինջ անել հայ ժողովրդին: Մտնուկ Գ. Ճիզմեջյանը հիմնվելով ականատեսների վկայությունների վրա պատմում է հարբերդի հայության տեղահանության ու ջարդի մասին:

Բաժնի վերջում ներկայացված է Սովետական Հայաստանի նոր հարբերդ ավանը, որի մասին հեղինակը գրավոր տեղեկություններ է ստացել Արտասահմանի հետ կուլտուրական կապի հայկական ընկերությունից:

Չորրորդ մասը, որ կոչվում է Հուշամատյան, պարունակում է նյութեր խարբերդցի կրոնա-և կեղեցական գործիչների, ղոհված մտավորականների մասին, ինչպես նաև հատրեհիբ էջեր կենդանի ու մահացած խարբերդցի գրողներից: Վերին աստիճանի օգտակար են հարբերդի հայկական կենցաղի և սովորույթների վերաբերյալ տեղեկությունները, հեքիաթների, հանելուկների, վիճակախաղերի, առակների ճոխ հավաքածուները և հարբերդի հայ բարբառի բառարանը:

Մանուկ Գ. Ճիզմեջյանի այս աշխատությունը կարող է պատմագրական, տեղագրական, ազգագրական և բարբառագիտական հարուստ նյութ մատակարարել հայկական հարբերդ հետազոտողներին:

ՀՐԱՆԴ Ք. ԱՐՄԵՆ, ՄԵԾԸ ՏԻԳՐԱՆ, հրատարակություն Հայ ազգային հիմնադրամի, մատենաշար № 20, տպարան Սահակ-Մեսրոպ, Կահիրե, 1957, առաջարան՝ Գարեդին Հովսեփյանի (248 էջ):

Առաջին անգամ հրատարակվել է 1940 թ., անգլերեն: Հայերեն թարգմանված է երկրորդ տպագրության համար պատրաստված անգլերեն ձեռագրից: «Հրանդ Արմենը,— գրել է Գ. Հովսեփյանը առաջաբանում,— ծանոթ չէ Մանանդյանի գործին, նորա գրել են, գրեթե, միևնույն ժամանակ և անկախ միմյանցից»: Ներկա հրատարակությունը առաջինից առանձին տարբերություններ չունի. ավելացված է միայն հավելված՝ Տիգրանակերտ քաղաքի մասին: Օգտվելով բազմաթիվ սկզբնաղբյուրներից և հաշվի առնելով եղած ուսումնասիրությունները, հեղինակը ստեղծել է ուշագրավ աշխատություն Հայաստանի հնագույն ժամանակաշրջանի պատմության մի հատվածի մասին: Արտաշեսյան հարստության հզորացման և

հայկական հողերը մի միասնական պետության մեջ միավորելու պատմական իրողության շուրջը համառոտ էքսկուրս կատարելուց հետո, Հ. Արմենը իր ուշադրությունը բևեռում է Տիգրան II-ի ռազմական գործունեության այլևայլ կողմերի վրա: Մանրամասն նկարագրված են վերջինիս՝ հարևան երկրների և առանձնապես Պարթևական թագավորության ու Հռոմի հետ ունեցած հարաբերությունները, հաղթական արշավանքներն ու նվաճումները, ներքին գործերը: Ղաշինը Պոնտական թագավորության հետ, արյունահեղ կռիվներն ընդդեմ Հռոմի, ի վերջո, պարտությունն ու կյանքի վերջին տարիները: Հեղինակը քննադատական մոտեցում ունի աղբյուրների և ուսումնասիրությունների նկատմամբ: Գիրքն ունի Տիգրան II-ի ժամանակի Հայաստանի քարտեզ, մատենագրություն և հատուկ անունների ցանկ:

ԳԵՎՈՐԳ Ս. ԵՐԵՎԱՆՅԱՆ, Պատմություն Չարսանճազի հալոց, հրատարակություն Համա-Չարսանճազի հայրենակցական միության կենտրոնական վարչության, Բեյրութ, 1956, ներածականի հեղինակ՝ Արշակ Ալպոյաճյան (700 էջ):

Աշխատությունը նվիրված է պատմական Ծոփաց աշխարհի (Չորրորդ Հայք) մի մասը կազմող Դերսիմ գավառի դաշտային շրջանի՝ Չարսանճազի հայության պատմությանը: Ենթոհիվ այս ուսումնասիրության կորստից վերկվել է պատմական Հայաստանի շուրջնասիրված գավառներից մեկի պատմությունը, մի գավառ, որի 60 գյուղերի և մի քանի քաղաքների շուրջ 40.000 հայ բնակիչների մեծ մասը 1915 թ. մեծ եղեռնի ժամանակ զոհ գնաց սուլթանական Թուրքիայի յաթաղանին: Հեղինակը վեր է հանել իր ծննդավայրի հին ու նոր պատմությունը, աշխարհագրությունը, վարչական բաժանումը, կառավարման ձևերը, մանրամասն ու հետաքրքրական տեղեկություններ է տվել Չարսանճազի տնտեսական ու մշակութային կյանքի, ազգագրության, մասամբ և բարբառի մասին: Գրքում ուշագրավ տեղեկություններ կան նաև ողջ Դերսիմ գավառի պատմության, աշխարհագրության, տնտեսության և հատկապես հայերի ու գերսիմաբնակ բրդերի փոխհարաբերությունների վերաբերյալ: Գիրքը նկարագրված է, նրան կցված են Չարսանճազի քարտեզը և Բերրի քաղաքի հատակագիծը:

2. ՆՈՐ ՊԱՐՔԵՐԱԿԱՆՆԵՐ

«Ծիրանի գոտի»

Բոստոնում (ԱՄՆ) լույս տեսավ «Ծիրանի գոտի» արվեստի և գրականության եռամսյայի առաջին համարը: Եռամսյայի խմբագիրն ու հրատարակիչն է Հրանտ Ավետիսյանը: Նոր պարբերականի հետապնդած նպատակների մասին եռամսյայի խմբագրական հոդվածում ասված է. «Թերթին մեր կոչումն է ծառայել ժողովուրդին ու այդ տենչանքը ինքնին կը նպաստե աշխարհաշեն պայքարին: Այդ սուրբ պայքարը ամեն մարդու երիցադույն պարտքն է, որպեսզի խաղաղությունը մեր երդիքներուն վրա դրոշ պարզե ... Այս եռամսյան խաղաղաբար տեսիլքով ծնունդ կառնե ու այդ անկշռելի երանությանմը կուղև պատվանդանել իր հաջորդական քայլերը»:

«Ծիրանի գոտի»-ն բացվում է Ավ. Իսահակյանի խոսքով՝ ուղղված սփյուռքահայությանը — «Անթառամ պահեցեք Սփյուռքում Մեսրոպյան տառերի փառքը»: Եռամսյայի նյութերի կեսից ավելին նվիրված է Սովետական Հայաստանի իրականությանը, առավելապես գրականության և արվեստի հարցերին: Այսպես, համարում գետնից բերված են Ն. Զարյանի հոդվածը՝ Դ. Դեմիրճյանի մահվան առթիվ («Անխոնջ վարպետը») և մեծ վարպետի մանրապատմից մի քանի նմուշ, Շ. Տալյանի «Տիգրան Զուհադյանի երկերը սովետահայ բեմի վրա», Ս. Ոսկանյանի «Զարուհի Դուրխանյան», Տ. Սազանդարյանի «Օպերայից մինչև Լյումա», Ստ. Կուրտիկյանի «Արզնիի լուսամրոցը», Ա. Գրաշու, Ս. Տարոնցու բանաստեղծությունները և այլն: Համարում նյութեր ունեն Ա. Սոփոկլյանը, Մ. Պերպերյանը, Գ. Մուշեղյանը (Երևանի ծածկած շուկայի մասին), Վ. Ղուկասյանը (Երևանի Պատմական թանգարանի մասին), Հ. Քյաթիպյանը և ուրիշներ, բանաստեղծություններ ունեն Հ. Ավետիսյանը, Գ. Խանենցը, Հ. Գուլումճյանը, Զ. Պլպուլը, Գ. Պետիկյանը և ուրիշներ:

Եռամսյան պատկերազարդ է և ունի «Լուրեր հայրենիքեն» և «Սփյուռքահայ կյանք» բաժինները:

«Ն ո Ր գ ի Ր ք»

Դամասկոսի Գրասեր Նրիտասարդների Միությունը, որը ստեղծվել է անցյալ տարվա օգոստոսին, ձեռնարկել է «Նոր գիրք» ամսագրի հրատարակմանը: «Նոր գիրք»-ը Դամասկոսի հայություն առաջին տպագիր օրգանն է, մի «Սպուտնիկ» դամասկոսյան իրականության հա-

մար», ինչպես ասված է ամսագրի խմբագրական հոդվածում:

Փորձառավար այս ամսագրի առաջին էջերը նվիրված են Ավ. Իսահակյանի հիշատակին (համառոտ կենսագրական, Մարինետա Շահինյանի հոդվածն Ավ. Իսահակյանի մահվան առթիվ, բանաստեղծի գործերից՝ «Մեր պատմիչները և մեր գուսանները», «Նս երգիչ եմ—երկնի թիթեռ» և «Ազգային երգը»)։ Մյուս նյութերը՝ բանաստեղծություններ, պատկերներ, քննադատական համառոտ ակնարկներ՝ առավելապես երիտասարդ սկանկների փորձեր են:

Ամսագրի վերջում համառոտակի տրված է Գրասեր Նրիտասարդների Միության ստեղծման, նպատակների և գործունեության մասին:

«Փ յ ո լ ն ի կ»

Եթովպահայ փոքրաթիվ գաղութն այս տարվա հունվարից սկսել է լույս ընծայել «Փյունիկ» տեղեկագրական գրական-գեղարվեստական պարբերագիրքը: Արդեն լույս են տեսել հունվարի և փետրվարի համարները: Ամսագիրն իր առաջ խնդիր է դնում սատարել հայ մշակույթի պահպանմանն ու զարգացմանը եթովպահայ գաղութում, լուսաբանել այդ դաղութի պատմությունը, ինչպես նաև եթովպիայի պատմությունը, աշխարհագրական պայմաններն ու տնտեսական ներկա վիճակը:

Ամսագիրն իր էջերում տպագրում է գեղարվեստական գործեր (արձակ և չափածո), դիտական և աշխարհագրական հանրամատչելի հոդվածներ, եթովպահայ կյանքն արտացոլող նյութեր, տեղեկություններ և լուրեր Սովետական Հայաստանից, նոտագրված երգեր, կրոնական բովանդակության հոդվածներ և սպորտային նորություններ:

Գեղարվեստական գործերից առաջին երկու համարներում տպագրված են Ղ. Աղայանի «Անահիտը» (շարունակվում է), Սիամանթոյի «Կաղանդի իրիկունը», տեղական ուժերից Մ. Քոչկերյանի, Գ. Կարապետյանի փոքրիկ պատմվածքները, Ա. Աճեմյանի, Գ. Կարապետյանի, Հ. Արզումանյանի բանաստեղծությունները: Ամսագրի երկրորդ համարում գետնից բերված է Մ. Քոչկերյանի «Եթովպիա» աշխարհագրական-տնտեսական ակնարկը (շարունակելի) և Հ. Նազարյանի հոդվածը երկրի սովետական արհեստական արբանյակների մասին:

«Կենսական վիճակագրություն Հայաստանի» համառոտ ակնարկում (հունվարյան համար) բերված են Սովետական Հայաստանի նվաճում-

ները պատկերող բազմաթիվ թվական տվյալներ:

«Փյունիկը» լույս է տեսնում առաջիկա խմբարտիպ, 175—200 օրինակ տիրաժով, Ամսադիրը հրատարակում է Ազգիս-Աբերայի ազգային Գեոգրոֆի վարժարանը:

«ՆՐԻՖ», գիրք գրականության և արվեստի, Հայկապ:

1956 թվականից Հայկապում սկսել է լույս տեսնել «Նրիֆ» խորագիրը կրող պարբերականը, որն իր առջև խնդիր է դրել արտացոլել առհասարակ արաբական և մասնավորապես Սիրիայի հասարակական ու կուլտուրական կյանքը, սիրիացի հայերի առօրյան, հույզերն ու տենչերը, հայրենաբաղձությունը, պայքարը

Սիրիայի բարօրության և անվտանգության համար:

Սովետական հայրենիքի փառահեղ իրականությունը ոգևորվելու և նրանից սովորելու ձգտումով՝ «Նրիֆը» մեծ հետաքրքրություն է հանդես բերում գեղարվեստի և հայ առաջադեմ գրականությանը, որն ապրում է իր աննախնի թաց վերելքը:

«Նրիֆը» պարբերականի առաջին համարներում լույս են տեսել հետաքրքրական նյութեր Սիրիայի կուլտուրական կյանքի, սովետահայ գրողների գործունեության մասին, տպագրվել են հատվածներ նրանց նոր ստեղծագործություններից, պոեզիաներ՝ ժողովուրդների բարեկամության մասին, հայ և սիրիացի նկարիչների գեղանկարչական գործերի վերաբերյալ: Մյուսները, հաղորդումներ՝ արտասահմանի կուլտուրական կյանքի մասին և այլն:

3. ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ ՆՈՐ ՀՐԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՐՏԻՐՈՍ ԳՈՒՇԱԳՃՅԱՆ, Կյանքի կարոտ, Բերքվածներ, Հայկապ, 1957 թ.:

Պայծառ տրամադրությամբ օժտված բանաստեղծությունների այս գիրքը լույս է բնծայել Հայկապի «Նրիֆ» հրատարակությունը:

Մարտիրոս Գուշագճյանը երգում է կյանքը, մարդուն պաճառած նրա ուրախությունները, կենսաբեր գարունը, ծաղկավետ դաշտերը, հյուրընկալ Հայկապ քաղաքը:

ԹևակաՆ և հեղինակը օժտված է դրական որոշ ձիրքով, բայց բանաստեղծության ասպարեզում դեռ սկսնակ լինելու կնիքը ուժեղ արտահայտված է այս գրքում: Նրա ձայնը համեմատաբար ավելի հաստատուն և առնական է դառնում, երբ երգում է վերածնված Սովետական Հայաստանը իր ծաղկող մայրաքաղաքով: Այդ շարքի բանաստեղծություններից մեկում Գուշագճյանը գրում է.

Իմ աստղազարդ հայրենիք, Սովետական
Հայաստան,
Զավակներուդ փայփայած՝ տեսիլքն ևս
դուն մարմնացած,
Քեզմե հեռու, բայց քեզմով դարձած
հորը, աննահանջ,
Գո՛վըդ հյուսմ, քե՛զ ևրդեմ՝ հուր
խոսքերով խոլական:

Բանաստեղծությունների գիրքն ունի «Կյանքի կարոտ», «Հայրենական երգեր», «Սիրտի երգեր», «Վերջին երգ» բաժինները:

ՏԻԳՐԱՆ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆ, Զառի-րափին վրա. Պատմվածքների ժողովածու, Բելյուսթ, 1957 թ.:

Բելյուսթի Անի հրատարակությունը 1957 թվականին լույս է բնծայել սփյուռքահայ արձակագիր Տիգրան Վարժապետյանի «Զառիփափին վրա» պատմվածքների ժողովածուն, նրա առաջին ժողովածուն՝ «Կյանքի քառուղիներ» լույս է տեսել 1945 թվականին: Եթե աչքի առաջ ունենանք շուրջ տասներկու տարիների անջրպետով իրարից բաժանված այս երկու ժողովածուները, կարող ենք ասել, որ հեղինակը մեծ ճանապարհ է անցել թեմաների հարստացման, գաղափարների հասունացման և վարպետության բարձրացման տեսակետից: «Զառիփափին վրա» ժողովածուն, որն ընդգրկում է քսան պատմվածք, անկասկած կոչված է իր տեղը գրավելու սփյուռքահայ գրականության մեջ:

Տիգրան Վարժապետյանը անցյալ պատերազմին ապաստան է գտել Մերձավոր Արևելքի նպաստամատուցչի որբանոցներից մեկում: Ապրել է տարաբախտ որբի կյանքի դառնությունները, սակայն, շնորհիվ իր տոկուն անհատականության հաջողել է ուսումը շարունակել և ստանալ բժշկական վկայական Բելյուսթի ամերիկյան համալսարանից: Երիտասարդ մտավորականը մասնակցում է Սիրիայի և Լիբանանի ոչ միայն գրական շարժումներին, այլև ընդհանրապես ազգային կյանքին: Նա հանդիսացել է «Ծիածան» գրականության և արվեստի ամսագրի հիմնադիրներից մեկը: Որպես դասախոս ծառայել է Բելյուսթի Դարուհի Հակոբ-

յան աղջիկների երկրորդական վարժարանում: Պատերազմից մի քանի տարի հետո մեկնել է Ամերիկայի Միացյալ Նահանգները մասնագիտանալու համար բժշկական բնագավառում, առանց սակայն թողնելու զբաղմունքները, որը կարելի է ասել, Տիգրան Վարժապետյանի գոյության իմաստն է: Ներկայումս հաստատվել է Բեյրութում և նպաստում է Մերձավոր Արևելքի հայ կուլտուրական կյանքի դարգացմանը:

Վարժապետյանը մոռալ դույններով է վրձինում Սփյուռքի հայության ներկան: Արտասահմանի պայմաններում հին ու նոր սերունդների մտածելու, զգալու և գործելու ձևերի մեջ ստեղծվել են խոր անջրպետներ: Նույնիսկ հայրն որդի դարձել են իրար օտար: Խոստում են նույն լեզվի բառերով, բայց չեն հասկանում, չեն ըմբռնում իրար: Նվաճանքից այն սրտամաշիկ ողբերգությունը, որ Տիգրան Վարժապետյանը հաջողությամբ բացահայտում է իր ժողովածուի էջերում: Հեղինակը պարզ չկերպով գիտակցում է, որ հայր Հայրենիքից դուրս դատապարտված է անհետ կորչելու Սակայն այս փաստը հուսալքություն չի մատնում հեղինակին, որովհետև զաղթաշարժի երկնակամարի մոթ ամպերը ժամանակավոր կյանք ունեն միայն, նրանք պիտի փարատվեն հայրենի արևի ճառագայթներից: Սովետական Հայաստանի գոյության փաստը լավատես է դարձնում հեղինակին: Տիգրան Վարժապետյանի համար հայ ժողովրդի կյանքը մայր հողի մեջ է, և ինչքան Սփյուռքը կապվի հայրենի երկրին, այնքան ավելի կերկարաձգի իր գոյությունը արևի տակ:

«Բաղրամյանի դինուրը Հայաստան կերթա», «Գերագույն երջանկություն» և «Վերագարծը» պատմվածքները նվիրված են ներգաղթին: Անկասկած, Տիգրան Վարժապետյանը հավակնություն չունի այս թեման լիովին սպառած լինելու: Երեք մասնակի գեպերի պատմումով հեղինակը աշխատել է ցույց տալ սփյուռքահայության հայրենասիրությունը:

Հիշատակության արժանի են «Երեք շառաչ մթնոլորտի մեջ» և «Կյանքի քառուղիներ» ընդհանուր խորագրերի տակ զետեղված պատմվածքները: Առաջին շարքը վարպետությամբ վիպականացված հիշողություններ են որբանոցի կյանքից: Երկրորդ շարքի «Աբրահամ Լիկորն Կրիս» և «Պլեբին» պատմվածքը, որ բժիշկների կյանքից է, բացի դատարարականից ունի նաև մեկ ուրիշ նշանակություն: Դա հիվանդների երկաթի բողբոջ է ուղղված անարդարությունների դեմ: Մարդկային ազատությունների ջանքով հեղինակը ակնհայտ վրդովմունք է

ցուցաբերում ընդդեմ ամերիկյան օրենքներով նվիրագործված անօրինությունների:

Տիգրան Վարժապետյանի հերոսները ցածր խավի մարդիկ են, բոլոր ժողովրդի հարազատ զավակներ, որոնք կյանքում քայլում են, գործում և մտածում որպես լիարժեք անհատականություններ:

ԱՐՄԵՆ ԼՅՈՒԲԵՆ (ՇԱՀԱՆ ՇԱՀՆՈՒՐ),
Տրանսֆեր նոկայուրն, արձակ էջերի ժողովածու, Փարիզ, 1955 թ.:

Ֆրանսահայ գրող Շահան Շահնուրը (Արմեն Լյուբեն) տարբեր ժամանակներում լույս է բնծայել բանաստեղծությունների երկու ժողովածու և արձակ էջերի մի ժողովածու՝ «Տրանսֆեր նոկայուրն»: Վերջին գործը արժանացել է ֆրանսագիր օտարազգի արձակագիրների Ռիվարոլի մրցանակին: Ֆրանսիական արդի գրական աշխարհում բարձր են գնահատում Շահան Շահնուրի ստեղծագործությունները: Նա դարձել է ցանկալի հեղինակներից մեկը «նույնիսկ Ռիվյու ֆրանսեզ» և «Քանիս Գե Սեզոն» պարբերականների, ինչպես նաև Կալլիմար հրատարակչական հիմնարկի համար:

«Տրանսֆեր նոկայուրն»-ի մեջ ղեկավարական գույներով և հումանիստական զաղափարների գեղագիտական ընդհանրացումով Շահան Շահնուրը ներկայացնում է ֆրանսիական սանատորիաների տխուր առօրյան, որտեղ ինքր տանը հինգ տարուց ավելի բուժվելու նպատակով բարձր է ապրիս իր գոյությունը: Մարդկային տիպերի մի ալյազան հավաքածու—«անկարծրունիներ», «մոսլիստիկ դատարկապոտներ» և ցածր խավի զավակներ են կազմում նրա անմիջական շրջապատը, որտեղ «ոչ հույս կա, և ոչ հուսահատություն, ոչ սեր կա, և ոչ ստեղծություն»:

Ֆիզիկական տառապանքի և մահվան անմիջական ազդեցության տակ Շահնուրը անձնատուր է լինում ֆանտաստիկ խորհրդածությունների, արծարծելով մարդկային գոյության հետ կապված որոշ հարցեր: «Համակերպել ցավին, թե դիմադրել: Ոչ մեկը և ոչ մյուսը: Նետված անմարդկային ցավերի զոխրում, մի բան է մնում մարդ կակին,— թողնել որ սեփական գայլը նվաճի իր անձը, այսինքն, գայլին տալ որպես կեր իր ամբողջ ներաշխարհը, ուրիշ խոսքով անասնալու: ...Կան մարդիկ, որոնք իրենց ամբողջ կյանքի ընթացքում չեն ճանաչել ֆիզիկական ցավը, և շրջում են հրեշտակային բունի մեջ, անգիտանալով նույնիսկ իրենց մահը»:

«Տրանսֆեր նույնությունի» էջերում Շահան Շահնուրը մնացել է «Նահանջը առանց երգի» վեպի նույն պայծառատես հեղինակը, որ ոչինչ

չի կորցրել իր երբեմնի սրամիտ, զգալուն, հա-
րազատ և հումորով բարեխառնված արվեստից:

4. ՄԱՆՐ ԼՈՒՐՆՐ

Փարիզահայ երկու նկարիչների մասին

Հայ նկարիչներ Գառուին (Գառնիկ Ուզուն-
յան) և Շարթըր (Հարությունյան) Փարիզի նկար-
չական կյանքում հաճախ են հանդես գալիս
այնպիսի ստեղծագործություններով, որոնք
գրավում են ողջ հասարակայնության ուշադրու-
թյունը:

«Լը Պենտրը», նկարչության հարցերը շոշա-
փող ծանոթ հանդեսը, հետևյալ տողե-
րով է ներկայացնում Գառուինի արվեստը. «Եթե
արվեստի բնագավառում կարող ենք խոսել
հմայքի մասին, Գառուին մեր շրջանի հմայուղն
է: Նա այլափոխում է ինչ-որ տեսում է, սա-
կայն առանց աղարտելու նրանց բնույթը: Այս
տեսլապաշարը բազմաթիվ տարված մարդ-
կանց բերում է հանդարտեցնող ապաստան-
ներ, նույնիսկ երբ նկարած դործը ողբերգական
է կամ ամայի մի դաշտանկար:

Նա ապրում է Գեղեցիկի սրտին մեջ: Գե-
ղեցիկ, որ զանազան կողմերով կներկայանա
մեզ, բայց միշտ նույն նուրբ թելերի հյուսված-
քով, անշոշափելի, բայց ճշգրիտ, սուր, որտեղ
դույնները հասել են ամենաբաց երանգների ներ-
դաշնակության: Գառուին նկարիչն է Իլ-դը-Ֆրան-
սի, Վենետիկի, լքված թաղաքների, անդորր
ծովափների: Նկարիչն է էակների և իրերի տես-
կանություն, և այս բոլորը երկու հասու գեներ
ունեն — Գեղեցկությունն ու Հույսը:

«Լը Փարիզիեն Լիբերեն» թերթը անդրադառ-
նալով «Երիտասարդ նկարչության» տարեկան

ցուցահանդեսին, Շարթըրի մասին գրում է.
«Շարթըր տիրապետում է այս ցուցահանդեսին
որքան իր չուղանկար «Հողագործ»-ով նույն-
քան և իր մեծադիր գծագրությամբ («Մանող
կինը»), որի անվիճելի գեղեցկությունը և զծա-
գրական ամբողջությունը արվեստագետին տա-
լիս են առաջնակարգ մի տեղ ցուցադրված
նկարիչներին մեջ»:

Կոմպոզիտոր Օ. ՊերդերՅանի «Հայ- րենիք» սիմֆոնիան

Սփյուռքահայ կոմպոզիտոր Օննիկ Պերպեր-
յանը Փարիզի Կավա սրահում, կամուրեղի նվա-
զախմբի կատարումով հասարակությանն է ներ-
կայացրել իր Հինգերորդ՝ «Հայրենիք» սիմֆո-
նիան, որ կարևոր տեղ է գրավում հեղինակի
մյուս՝ «Հայկական սիմֆոնիա», «Լուսավորիչը»,
«Հայկական պատարագ», «Նարեկը» ստեղծա-
գործությունների շարքում:

«Հայրենիք» սիմֆոնիան, որ թեմատիկ կա-
ռուցվածք ունի, բաղկացած է երեք մասից:
Առաջին մասում կոմպոզիտորը ոգեկոչում է
հայ ժողովրդի պատմական անցյալը, զոմեր-
գում է Նարեկացու, Շնորհալու, Քուչակի Հայ-
րենիքը: Երկրորդ մասում փորձում է պատկերել
մեծ եղեռնը, որ հիմքից ցնցեց արևմտահայ
ժողովրդի կուլտուրական շրջել ժառանգությունը:
Երրորդ մասում ներկայացնում է հայ ժողովրդ-
ի հորահրաշ հայրենիքի վերածնունդը: